ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼԻՍ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ ՀԱՏՈՒԿ ՄԵԽԱՆԻԶՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 2 սեպտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի դեկտեմբերի 26-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի հուլիսի 3-ի N 906-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի հուլիսի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին (այսուհետ նաև՝ Պայմանագիր) Հայաստանի Հանրապետությունը միացել է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրով, որը վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-132-Ն որոշմամբ՝ հաշվի

առնելով Սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 որոշումը:

2. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին՝ Սանկտ Պետերբուրգում:

3. Դիմումին կից ներկայացված Արտաքին գործերի նախարարության՝ Արձանագրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի մարտի 10-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել:

Արձանագրության կողմերն են՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

2025 թվականի մարտի 10-ի դրությամբ Արձանագրությունն ստորագրած կողմերից որևէ մեկը չի ավարտել Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

Փոփոխությունները վերաբերում են այդ թվում՝ ԵԱՏՀ կողմից պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման հատուկ մեխանիզմ կիրառելու մասին որոշումներ ընդունելու կարգին, դրանց ուժի մեջ մտնելու, գործողությունը դադարեցնելու կամ դատական կարգով բողոքարկելու ընթացակարգերին, ինչպես նաև ընդունված որոշումների՝ մրցակցության վրա ազդեցության հետևանքների գնահատման առանձնահատկություններին:

4. Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ և կարգով մի շարք փոփոխություններ են կատարվում Պայմանագրում, մասնավորապես՝ Պայմանագրի 102-րդ հոդվածը լրացվում է 6-րդ կետով, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) II բաժինը լրացվում է 30[1] կետով, «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 8 հավելված) (այսուհետ նաև՝ Փոփոխվող արձանագրություն) VIII բաժինը շարադրվում է այլ խմբագրությամբ, փոփոխվում և լրացվում են Փոփոխվող արձանագրության VIII բաժնի 275-296-րդ կետերը, Փոփոխվող արձանագրությունը լրացվում է IX բաժնով, որը ներառում է եզրափակիչ դրույթները:

5. Համաձայն Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի՝ Պայմանագրի 102-րդ հոդվածը լրացվում է 6-րդ կետով, որի համաձայն՝ նախքան Փոփոխվող արձանագրության 291-րդ կետի երրորդ և յոթերորդ պարբերություններով նախատեսված՝ Հանձնաժողովի ակտերն ուժի մեջ մտնելը, այն ժամկետները, որոնց ընթացքում կարող է մաքսային մարմին ներկայացվել առանձնացված մրցակցող շուկա չմտնող՝ անդամ պետության տարածքում ներմուծված ապրանքն սպառելու հաստատումը, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6. Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

6.1. ապահովել, որ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 30-րդ կետին համապատասխան ներկայացված՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու (չկիրառելու) մասին Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը չեղարկելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկը պարունակի Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն այդպես չեղարկելու կամ դրանում փոփոխություն կա-

տարելու տնտեսական հիմնավորում (փոփոխություններ կատարելու մասին առաջարկը ներկայացնելու դեպքում՝ նշելով այդ փոփոխությունները) (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 275),

6.2. գործադիր իշխանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի այն հաստատումը ներկայացնելիս, ըստ որի՝ ներմուծված ապրանքն սպառվել է առանձնացված մրցակցող շուկա չմտնող Հայաստանի Հանրապետության տարածքում, հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի գումարը, ինչպես նաև նախնական հակագնագցման տուրք կամ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով հակագնագցման կամ փոխհատուցման միջոցները վերադարձնել՝ Փոփոխվող արձանագրությամբ նախատեսված կարգով. ընդ որում՝ այն ժամկետը, որի ընթացքում այդ հաստատումը կարող է ներկայացվել մաքսային մարմին, սահմանվում է Հանձնաժողովի կողմից (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 291, պարբերություն 3 և կետ 292),

6.3. գործադիր իշխանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի այն հաստատումը ներկայացնելիս, ըստ որի՝ ներմուծված ապրանքն սպառվել է առանձնացված մրցակցող շուկա չմտնող Հայաստանի Հանրապետության տարածքում, վերադարձնել որպես հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորությունների կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարները՝ ըստ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված կարգի. ընդ որում՝ այն ժամկետը, որի ընթացքում այդպիսի հաստատումը կարող է ներկայացվել մաքսային մարմին, սահմանվում է Հանձնաժողովի կողմից (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 291, պարբերություն 7),

6.4. Փոփոխվող արձանագրության 83, 84, 86, 146, 147 և 149-րդ կետերում նշված հանգամանքները վրա հասնելու դեպքում որպես հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարը վերադարձնել՝ այդ կետերով նախատեսված կարգով. ընդ որում՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնին ժամանակին տեղեկացնում է

այդպիսի հանգամանքները վրա հասնելու մասին (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 292, պարբերություն 2),

6.5. ուսումնասիրություն անցկացնող մարմնի՝ իրավասու մարմնի հետ ուսումնասիրություններ անցկացնելու հարցերի շուրջ փոխգործակցությունը կազմակերպելու նպատակով իրավասու մարմիններին ապահովել ուսումնասիրության նյութերին հասանելիությունը՝ հաշվի առնելով, որ իրավասու մարմինները երրորդ անձանց չեն փոխանցի և այլ եղանակով չեն հրապարակի ուսումնասիրության անցկացման հետ կապված տեղեկատվությունը (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 293, ենթակետ 2),

6.6. առաջնորդվել Պայմանագրի թիվ 8 հավելվածի VIII բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմով սկզբնական ժամանակահատվածում, որը կազմում է Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 2 տարի, և հաջորդող 2-ամյա ժամանակահատվածների ընթացքում, եթե սկզբնական կամ հաջորդող 2-ամյա ժամանակահատվածները լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ Հանձնաժողով չի ներկայացվում անդամ պետության կառավարության ղեկավարի՝ Պայմանագրի թիվ 8 հավելվածի VIII բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը կասեցնելու մասին ծանուցումը, իսկ նշված ծանուցումն ստանալու դեպքում՝ դադարել Պայմանագրի թիվ 8 հավելվածի VIII բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմով առաջնորդվելը՝ սկզբնական կամ հերթական 2-ամյա ժամանակահատվածը լրանալուց հետո մինչև Միջկառավարական խորհրդի համապատասխան որոշումն ընդունելը (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 295, պարբերություններ 1 և 2),

6.7. նախքան Փոփոխվող արձանագրության 295-րդ կետով նշված ծանուցումն ուղարկելը՝ Հայաստանի Հանրապետության մտադրության մասին տեղեկացնել Հանձնաժողովին և խորհրդատվություններ անցկացնելու հարցում ուղարկել՝ առկա մտահոգությունները կարգավորելու նպատակով (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 295, պարբերություն 4),

6.8. Պայմանագրի թիվ 8 հավելվածի VIII բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը վերսկսելու օրվանից շարունակել առաջնորդվել Փոփոխվող արձանագրության 295-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված կարգով. ընդ որում՝ 2-ամյա ժամանակահատվածների ընթացքը հաշվվում է այդ մեխանիզմի

կիրառումը վերսկսելու օրվանից (հոդված 1, կետ 3, Փոփոխվող արձանագրության կետ 295, պարբերություն 5):

7. Համաձայն Փոփոխվող արձանագրության 297-րդ կետի՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման հետ կապված՝ Հանձնաժողովի որոշումները և (կամ) Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին գործերը քննելու կարգը և առանձնահատկությունները որոշվում են Միության դատարանի ստատուտով (Պայմանագրի թիվ 2 հավելված) և Միության դատարանի կանոնակարգով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 սեպտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1793